ՆԱԽԱԳԻԾ

# ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«___» ______________ 2014թ. N _____-Ն

ք.Ստեփանակերտ

## ԱՆՀԵՏԱՁԳԵԼԻ ՀԱՄԱՐՎՈՂ ԳՆՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ, ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ 2014 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵՈՒՄ ՎԵՐԱԲԱՇԽՈՒՄ, ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2014 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 14-Ի N 1-Ն ԵՎ 2014 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 11-Ի N 54-Ա ՈՐՈՇՈՒՄՆԵՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության «Իրավական ակտերի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 71-րդ հոդվածին, «Բյուջետային համակարգի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 24-րդ հոդվածի 3-րդ մասին, «Գնումների մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 4-րդ հոդվածի 3-րդ մասին համապատասխան և հիմք ընդունելով Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2011 թվականի մարտի 22-ի «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» N 133-Ն որոշմամբ հաստատված կարգի 30-րդ կետի 5-րդ ենթակետի «բ» պարբերությունը՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությունը ***որոշում է.***

1. Անհետաձգելի համարվող՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության գյուղատնտեսության նախարարության կարիքների համար անհրաժեշտ գրասենյակային գույքի գնումը՝ 2 400 000 (երկու միլիոն չորս հարյուր հազար) ՀՀ դրամ գումարի չափով իրականացնել «Եվրովուդ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունից:

2. «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության 2014 թվականի պետական բյուջեի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի N 1 հավելվածում կատարել վերաբաշխում և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2014 թվականի հունվարի 14-ի «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության 2014 թվականի պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին» N 1-Ն որոշման N 2 հավելվածի ցուցանիշներում կատարել փոփոխություններ՝ համաձայն հավելվածի:

3. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2014 թվականի փետրվարի 11-ի «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության

2014 թվականի պետական բյուջեով նախատեսված գյուղատնտեսական ծրագրերի և միջոցառումների մասին» N 54-Ա որոշմամբ հաստատված հավելվածի՝

1) 6-րդ կետում և 6-րդ կետի 1-ին տողում «12 000,0» թիվը փոխարինել «5 668,0» թվով.
2) 8-րդ կետն ուժը կորցրած ճանաչել.
3) 9-րդ կետում և 9-րդ կետի 1-ին տողում «11 881,6» թիվը փոխարինել «6 165,0» թվով.
4) 11-րդ կետում «1 673 003,6» թիվը փոխարինել «1 687 652,2» թվով.
5) 11-րդ կետի 1-ին տողում «400 000,0» թիվը փոխարինել «350 000,0» թվով.
6) 11-րդ կետի 2-րդ տողում «80 000,0» թիվը փոխարինել «63 350,0» թվով.
7) 11-րդ կետի 4-րդ տողում «80 000,0» թիվը փոխարինել «136 160,0» թվով.
8) 11-րդ կետի 7-րդ տողում «50 000,0» թիվը փոխարինել «40 022,0» թվով.
9) 11-րդ կետի 8-րդ տողում «296 857.4» թիվը փոխարինել «469 857.2» թվով.
10) 11-րդ կետի 9-րդ տողում «229 093,0» թիվը փոխարինել «92 573,0» թվով.
11) 11-րդ կետի 10-րդ տողում «21 153,2» թիվը փոխարինել «19 790,0» թվով.
12) 12-րդ կետում «20 600,0» թիվը փոխարինել «23 000,0» թվով:

**ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ**
**ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏ** **Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

Հավելված
Լեռնային Ղարաբաղի
Հանրապետության կառավարության
2014 թվականի ____________________-ի
N ______ -Ն որոշման

«Հավելված N2
Լեռնային Ղարաբաղի
Հանրապետության կառավարության
2014 թվականի հունվարի 14-ի
N 1 -Ն որոշման

## «ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ 2014 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՄԱՍԻՆ» ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ N 1 ՀԱՎԵԼՎԱԾՈՒՄ ԿԱՏԱՐՎՈՂ ՎԵՐԱԲԱՇԽՈՒՄԸ ԵՎ ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2014 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 14-Ի N 1-Ն ՈՐՈՇՄԱՆ N2 ՀԱՎԵԼՎԱԾՈՒՄ ԿԱՏԱՐՎՈՂ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

/հազար ՀՀ դրամ/

| բաժին | խումբ | դաս | | Բյուջետային ծախսերի գործառական դասակարգման բաժինների, խմբերի և դասերի, ֆինանսավորվող ծրագրերի և վերջիններս իրականացնող մարմինների անվանումները | Ցուցանիշների փոփոխությունը (ավելացումները նշված են դրական նշանով, իսկ նվազեցումները` փակագծերում) | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | Առաջին եռամսյակ | Առաջին կիսամյակ | Ինն ամիս | Տարի |
| | | | | **ԸՆԴԱՄԵՆԸ ԾԱԽՍԵՐ** | - | - | - | - |
| | | | | այդ թվում` | | | | |
| **04** | | | | **ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ** | - | - | - | - |
| | **2** | | | **Գյուղատնտեսություն, անտառային տնտեսություն, ձկնորսություն և որսորդություն** | - | - | - | - |
| | | 1 | | Գյուղատնտեսություն | - | - | - | - |
| | | | 07 | Խորհրդատվական և տպագրական ծառայությունների ու մոնիթորինգի կազմակերպում | | | | **(6 332.0)** |
| | | | | ԼՂՀ գյուղատնտեսության նախարարություն | | | | |
| | | | 09 | Գյուղատնտեսական մշակաբույսերի բերքատվության բարձրացման և աշխատանքների կազմակերպման բնագավառում պետության կողմից համայնքների ղեկավարներին պատվիրակված | | | | **(5 000.0)** |

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | լիազորությունների իրականացման ֆինանսավորում | | | | |
| | | | | ԼՂՀ գյուղատնտեսության նախարարություն | | | | |
| | | | 10 | Գյուղատնտեսական կենդանիների արհեստական սերմնավորում | | | | **(5 716.6)** |
| | | | | ԼՂՀ գյուղատնտեսության նախարարություն | | | | |
| | | | 12 | Գյուղատնտեսական միջոցառումների իրականացման ծրագրեր | | | | **14 648.6** |
| | | | | ԼՂՀ գյուղատնտեսության նախարարություն | | | | **14648.6** |
| | | | 13 | Կենտրոնացված կարգով գույքի և սարքավորումների ձեռքբերում | | | | **2 400.0** |
| | | | | ԼՂՀ գյուղատնտեսության նախարարություն | | | | **2 400.0** |

:»:

**ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**
**ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ**
**ՂԵԿԱՎԱՐ** **Լ. ԳՐԻԳՈՐՅԱՆ**